ասում կը լինի. — «ա՜խ, ի՞նչ եղաւ, չեկաւ որդիս, փլաւը սառեց, ա՜խ չեկաւ, որ ուտէ»... Իմ խեղճ մայրն էլ այս խօսքերը լսելով մեռաւ, բայց սիրելի որդու երեսը չտեսաւ... խա՜... խա՜... խա՜... — Դու էլ, Ֆարհատ, միւս անգամ մօրդ եփած փլաւը չե՜ս ուտի...

Նա սկսեց դարձեալ ծիծաղել: Զատկական փլաւը աղքատ ընտանիքի աղքատ զաւակի համար մի այնպիսի բարիք էր, որ նա երբեք մոռանալ չէր կարող: Արեւելեան կերակուրների այդ թագուհին, որ հարուստները վայելում են համարեա ամէն գիշեր, աղքատի տանը մուտք է գործում տարեն մի անգամ միայն, այն է զատկական տօնի օրը: Բայց իմ ցաւը փլաւը չէր, ես գիտէի, որ մեր տանը այն գիշեր փլաւ չէր լինի եւ ոչ որեւիցէ զատիկոայ կերակուր, որով մայրս եւ քոյրերս կարողանային իրանց քառասուն օրոայ պասը բաց անել: Ինձ միայն դուր չեկաւ Սագօյի վայրենի զգացմունքը դէպի մայրական գութը. ես երեսս շուռ տոի նրանից եւ դարձայ դէպի Կարօն, որ գինով լիքը ահագին գաւաթը մեկնեց ինձ, ասելով.

— Խմի՛ր:

— Այսքանը չեմ կարող խմել, — պատասխանեցի ես հրաժարուելով:

— Խմի՛ր, կսովորես... — ասաց նա ժպտելով:

Ես դարձեալ հրաժարուեցայ:

— Ես էլ առաջ գինու հոտը առնելիս հարբում էի. — մէջ մտաւ Սագօն, — բայց հիմա՞...

— Հիմա ուրիշները քո հոտը առնելիս հարբում են... — վրայ բերեց երկու անծանօթ երիտասարդներից մէկը, որ բոլոր ժամանակ լուռ էր:

Ես ընդունեցի Կարօյի ձեռքից գինու գաւաթը եւ դատարկեցի մինչեւ կէսը. այդ առաջինն էր մինչեւ այնօր, որ միանգամից այնքան խմեցի:

Խօսակցութիւնը գնալով աւելի կենդանանում էր. գինու գաւաթը արագութեամբ պտտւում էր. լուռ էր միայն Ասլանը, թէեւ նա եւս ընդունած բաժակը մինչեւ վերջին կաթիլը ցամաքեցնում էր:

Ինձ բոլորովին անծանօթ մնացին երկու երիտասարդները, որոնց մէկին կոչում էին Մուրադ, իսկ միւսին Ջալլադ: Ովքե՞ր էին նրանք կամ որտեղացի՞, — ես չկարողացայ գիտենալ. միայն ինձ երեւում էր, որ Զեյթունի կողմերից պէտք է լինէին, եւ նրանց թէ հագուստի ձեւերը եւ թէ բարբառը հաստատում էին իմ կարծիքը: Չգիտեմ, թէ ինչո՞ւ ես այնպէս հակակրութեամբ էի վերաբերւում դէպի այդ երկու վիթխարի տղամարդիկը, որոնց թէ խօսակցութիւնը, թէ վարմունքը եւ թէ դէմքերը արտայայտում էին կատաղի վայրենութիւն: